

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

/տարեկան/

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1.	2.	3.	4.	5.
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	69.	Բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի (STEM) ուսուցման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	2018 թվականի դեկտեմբերին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց «Հայաստանում ԵՄ-ն նորարարության համար» նախաձեռնություն. Կրթության բարելավում՝ գիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ոլորտներում» ֆինանսավորման համաձայնագրին, որի նպատակն է վերացնել աշխատաշուկայի կարիքների և երկրի կրթական համակարգի արդյունքների միջև անջրպետը, կրթական համակարգում ներդնել կրթական տեխնոլոգիաների առկայություն և դասավանդման ժամանակակից մոտեցումներ և շարունակել զարգացնել մարդկային կապիտալը:	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	70.	«Հանրակրթական հաստատությունների կառավարման նոր համակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը ¹	ՀՀ ԿԳՆ և Եվրոպական միության «Yes» ծրագրի շրջանակում աշխատանքներ իրականացնող փորձագետներից մեկի համագործակցության արդյունքում մշակվել է «Դպրոցների կառավարման համակարգի վերափոխում» միջոցառման իրականացումն ապահովող գործողությունների փաթեթ: Մշակված փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ, որտեղ բազմիցս քննարկվել է բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Նախագիծը քննարկվել է նաև Կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի նիստում, արժանացել է հավանության: Արված դիտողություններն ու առաջարկները կամփոփվեն և ըստ նպատակահարմարության կներառվեն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունն այլևս չունի արձանագրային որոշումներ ընդունելու իրավասություն, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջները, միևնույն	

			<p>Ժամանակ, հաշվի առնելով քաղաքական իրողությունների փոփոխությունները և դրա արդյունքում ձևավորված նոր կառավարության դիրքորոշման հստակեցման անհրաժեշտությունը նշված իրավական ակտով սահմանվող կարգավորումների վերաբերյալ, նախարարությունում շարունակվում են նախագծի մշակման, սկզբունքների և իրականացման հստակեցման վերաբերյալ, այդ թվում՝ հանրային քննարկումները:</p> <p>Միաժամանակ, նախարարությունը նախաձեռնել է համապատասխան իրավական հիմքերի ամրագրումը կրթության ոլորտը կարգավորող օրենքներում, մասնավորապես, «Հանրակրթության մասին» և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքերում՝ Կրթության և գիտության նախարարության համար սահմանելով անմիջական լիազորություն՝ հաստատելու համապատասխան կարգեր և ընթացակարգեր:</p>	
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>71.</p>	<p>«Հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների տնօրենի ընտրության (նշանակման) նոր համակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով կառավարության նիստի քննարկմանն է ներկայացվել կրթության և գիտության նախարարի 2018-10-02 թիվ 01/10/14421-18 գրությամբ:</p> <p>Վարչապետի 2018-11-02 թիվ 02/14.1/37280-18 հանձնարարականի համաձայն նախագիծը վերադարձվել է կրթության և գիտության նախարարություն՝ քննարկելու վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի և իրավաբանական վարչությունների եզրակացությունները, ըստ որի առաջարկվել է.</p> <p>1. Քննարկել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգում առկա՝ մրցույթը ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ անցկացնելու պահանջն ընդհանրապես հանելու նպատակահարմարության հարցը, քանի որ, ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանով հաստատված՝ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի, նախարարությունը յուրաքանչյուր հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդի կազմում արդեն իսկ ունի իր կողմից նշանակված առնվազն մեկ անդամ:</p>	

2. Նախագծով որոշակի դեպքերում պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի թեկնածուների թվից ընտրություն կատարելու իրավասությունը փոխվարչապետի կամ Երևանի քաղաքապետի փոխարեն վերապահվում է կրթության և գիտության նախարարին: Գտնում ենք, որ ավելի նպատակահարմար կլինի այնպիսի կարգավորումներ տալ, որ խորհուրդները հնարավորություն ունենան կատարել տնօրենի վերջնական ընտրություն:

Հաշվի առնելով նշված սկզբունքային առաջարկությունները՝ կրթության և գիտության նախարարությունը նախաձեռնեց քննարկումների նոր գործընթաց:

Արդյունքում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ամբողջությամբ փոխվեց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման հավելվածով հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ը շարադրվել է նոր խմբագրությամբ:

Նշված փոփոխությամբ պայմանավորված՝ անհրաժեշտության էր առաջացել փոփոխություններ և լրացումներ կատարել նաև ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված N 3-ով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունում և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի 113-Ն հրամանի հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ»-ում:

Նախագծերի փաթեթը 2018 թվականի նոյեմբերի 14-ին քննարկվել է կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդում և առաջիկայում կներկայացվի շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանը, կրթվի հանրային քննարկման, այնուհետ սահմանված կարգով կներկայացվի կառավարության նիստի քննարկմանը:

<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>72.</p>	<p>ՀՀ Արմավիրի մարզում 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում (Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոցի և Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ (օժանդակ) դպրոցի վերակազմակերպման (վերանվանման) միջոցով) ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի N701-Ա որոշմամբ «Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, իսկ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի N698-Ա որոշմամբ «Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 15 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի:</p>	
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>73.</p>	<p>«Նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորման մեխանիզմների» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը¹</p>	<p>ՀՀ կառավարությանն առաջարկվել է նախագծի մշակման վերջնաժամկետ սահմանել 2018 թվականի վերջը, իսկ ներդրման գործընթացն իրականացնել 2019-2021թթ. ընթացքում: Կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 1030-Լ որոշմամբ հաստատված 2018-2022 Գործունեության ծրագրում միջոցառումը չի ներառվել: Մինևույն ժամանակ, նախագիծը մշակվել է, առաջիկայում, նախարարությունում քննարկելուց հետո, նախատեսվում է իրականացնել հանրային քննարկումներ: Նախագծի հաստատումն ապահովելու համար, սակայն, անհրաժեշտ է լրացում կատարել «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում, որով ՀՀ ԿԳ նախարարությանը կվերապահվի նման նախագիծ հաստատելու իրավասություն: Օրենքի նախագիծը մշակվել է, գտնվում է քննարկման փուլում և սահմանված կարգով կներկայացվի Վարչապետի աշխատակազմ²:</p>	
<p>ՀՀ</p>	<p>74.</p>	<p>«Արտադպրոցական դաստիարակման</p>	<p>Քանի ՀՀ կառավարությունն այլևս չունի արձանագրային որոշումներ</p>	

¹ Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 7-ից, ՀՀ կառավարության արձանագրային որոշումներ այլևս չեն ընդունվում, հետևաբար ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների և գերակա խնդիրներում նշված արձանագրային որոշման նախագիծերը ներկայացվել են ՀՀ կառավարության որոշման նախագծի տեսքով:

² Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի, որն ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից համապատասխան իրավական ակտերի նախագիծերը ներկայացվում են ՀՀ վարչապետի աշխատակազմ:

կրթության և գիտության նախարարություն		րակության 2018-2022 թվականների զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ընդունելու իրավասություն, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջները, միևնույն ժամանակ, հաշվի առնելով քաղաքական իրողությունների փոփոխությունները և դրա արդյունքում ձևավորված նոր կառավարության դիրքորոշումը «Արտադպրոցական դաստիարակության 2018-2022 թվականների զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի ընդունումը չի ներառվել ՀՀ կառավարության 2018-2022թթ.գործունեության միջոցառումների ծրագրում:	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	75.	«ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ մարզերի զարգացման ուղղություններից և աշխատաշուկայի առանձնահատկություններից ելնելով՝ վերանայվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը: Հիմնականում վերանայվել են գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող մասնագիտությունները, որոշ մասնագիտությունների գծով ավելացվել են (ըստ ճյուղերի) բառերը, ինչը հնարավորություն կտա հետագայում նշյալ մասնագիտությունների գծով ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատել մասնագիտացումներ: Նախագծով նաև լրացվել է նոր մասնագիտություններ, որոնք պահանջարկված են աշխատաշուկայում, ինչպես նաև խմբագրվել է ցանկում եղած անճշտությունները: Վերանայված ցանկերը ներկայացվել են շահագրգիռ գերատեսչությունների և ուսումնական հաստատությունների քննարկմանը: Ստացված կարծիքների ամփոփումից հետո լրամշակվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու և ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ (նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 977-Ն որոշմամբ):	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	76.	«Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ	ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 30.03.2018թ. N 01/06.2/3659-18 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ փոփոխություններ և	

թյուն		<p>ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 686-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: 2018թ. մայիսի 14-ին ՀՀ կառավարության աշխատակազմից գրություն էր ստացվել՝ նախագիծը մեկ անգամ ևս քննարկելու վերաբերյալ: Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարականի մեկ անգամ ևս քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի լրամշակման հարցը և 04.06.2018թ. N 01/06.2/6130-18 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության դիրքորոշումը /կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների համատեքստում քննարկել նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի լրամշակման հարցը, որից հետո նախագիծը սահմանված կարգով կներկայացնի ՀՀ կառավարության հաստատմանը/:</p>	
-------	--	---	---	--

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	134.	Նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովում	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված կարգով մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:</p> <p>Նախագիծը բազմիցս քննարկվել է ՀՀ կառավարությունում, տեղադրվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:</p> <p>Նախագիծը վերադարձվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջով վերանայման: Նշված պահանջի համաձայն՝ Նախագիծը վերանայվել և սահմանված կարգով շրջանառվել է, հավաքագրվել են կարծիքները, դիտարկումները, դրանք քննարկվել մինչև 2019թ. հունվար ամսվա ավարտը վերջնական</p>	

			<p>ամփոփվելու է: Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջները, նախարարությունը նախաձեռնել է համապատասխան իրավական հիմքերի ամրագրումը կրթության ոլորտը կարգավորող օրենքներում, մասնավորապես, «Հանրակրթության մասին» և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքերում՝ Կրթության և գիտության նախարարության համար սահմանելով անմիջական լիազորություն՝ հաստատելու համապատասխան կարգեր և ընթացակարգեր: Օրենքի ընդունումից հետո նախարարի հրամանով նախագիծը կհաստատվի:</p> <p>«Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրման ծրագրի» հաստատումից հետո՝ համաձայն ժամանակացույցի, կիրականացվի նախադպրոցական այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների փուլային ներդրում համայնքներում՝ ապահովելով նախադպրոցական կրթության մատչելիություն և հասանելիություն:</p>	
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>135.</p>	<p>Հանրակրթության բովանդակության և ծրագրերի բարելավում</p>	<p>Ֆինանսական և ձեռնարկատիրական կրթության համատեքստում ուսուցիչների փուլային վերապատրաստում, ֆինանսական և ձեռնարկատիրական կրթության ներդրում</p> <p>Հանրակրթական հաստատություններում ֆինանսական և ձեռնարկատիրական տարրերի ներդրման նպատակով կազմակերպվել են մի շարք հանդիպում-քննարկումներ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի, նախարարի տեղակալի, ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության, փորձնական ծրագրում ընդգրկված դպրոցների տնօրենների և ուսուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ամփոփվել են փորձնական ծրագրի արդյունքները, ներկայացվել է կատարված աշխատանքը, վերհանված խնդիրները և դրանց ուղղությամբ իրականացված գործողությունները, կատարվել են նոր դիտարկումներ, քննարկվել են ծրագրի ներդրման մանրամասները:</p> <p>Քննարկումների արդյունքում որոշվել է՝</p> <p>Ֆինանսական կրթության տարրերի ներդրման մասով՝ լրամշակել և հաստատել «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն» առարկաների ծրագրերը. Երաշխավորել ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկը.</p>	

			<p>2018-2019 ուստարում ծրագիրը ներդնել հանրապետության թվով 350 դպրոցներում. Օգոստոս և նոյեմբեր ամիսներին վերապատրաստել ընտրված դպրոցների ուսուցիչներին:</p> <p>Ձեռնարկատիրական կրթության տարրերի ներդրման մասով՝ լրամշակել և հաստատել «Տեխնոլոգիա» առարկայի ծրագիրը. Երաշխավորել ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկը. 2018-2019 ուստարում ծրագիրը ներդնել հանրապետության բոլոր դպրոցների բոլոր 2-րդ և 3-րդ դասարաններում. 2018-2019թ. հանրապետության բոլոր դպրոցների մեկական 4-րդ դասարաններում ներդնել «Տեխնոլոգիա» առարկայի փորձնական ծրագիրը. Սահմանել, որ տարրական դասարաններում առարկան պետք է դասավանդի դասվարը. Օգոստոս և նոյեմբեր ամիսներին վերապատրաստել բոլոր ծրագրում ընդգրկվող բոլոր դասվարներին:</p> <p>Միջնակարգ կրթության 3-րդ աստիճանում/10-12 դասարաններ/ կրեդիտային համակարգի փորձնական ծրագրի ներդնում Մշակվել և ՀՀ կառավարությանն է ներկայացվել ՀՀ Միջնակարգ կրթության երրորդ աստիճանում (10-12-րդ դասարաններ) կրեդիտային համակարգի ներդրման փորձնական ծրագրին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից տրվել է եզրակացություն, որը ենթադրում էր լրամշակումներ: Նախագիծը ևս մեկ անգամ կքննարկվի ՀՀ կրթության և գիտության նախարարությունում, կհստակեցվեն մոտեցումները, կարվեն անհրաժեշտ փոփոխությունները, սահմանված կարգով կներկայացվի հանրային քննարկման, ապա՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p>	
ՀՀ կրթության և գիտության	136.	Համընդհանուր ներառական կրթության ներդրում համակարգի	ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» համաձայն, 2018 թվականին համակարգը	

<p>նախարարության</p>			<p>ներդրվել է ՀՀ Արմավիրի մարզում, հիմնվել է երկու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N15 և Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N2 հատուկ (օժանդակ) դպրոցների վերակազմակերպման միջոցով:</p> <p>Այսպիսով, արդեն իսկ համընդհանուր ներառական կրթության համակարգին անցած Սյունիքի, Լոռու, Տավուշի և Արմավիրի մարզերում՝</p> <p>.ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիք, վերակազմակերպման արդյունքում, նախկին հատուկ հանրակրթական դպրոցների սովորողները տեղափոխվել են հանրակրթական դպրոցներ, .ներդրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, .ներդրվել է երեխայի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման նոր չափանիշները:</p> <p>Համընդհանուր ներառական կրթության համակարգին անցած մարզերում իրականացվել են վերապատրաստումներ ներառական կրթության, երեխաների գնահատման գործիքակազմի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգի վերաբերյալ՝ հանրակրթական դպրոցների, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների և ուսուցչի օգնականների համար:</p> <p>Նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի 4 մասնաճյուղերը, իրենց կանոնադրական գործառույթների համաձայն, իրականացրել են երկրորդ մակարդակի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և երեխաների գնահատման/վերագնահատման գործընթաց: Կենտրոններում տրամադրվում են խորհրդատվություններ՝ ուսուցչի օգնականներին, բազմամասնագիտական թիմի անդամներին և ծնողներին:</p> <p>Համընդհանուր ներառական կրթության անցման ողջ ցիկլի ընթացքում, Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնը տրամադրել է մասնագիտական խորհրդատվություն, համակարգել է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների</p>	
----------------------	--	--	--	--

			աշխատանքը, մշակել է մեթոդական նյութեր, իրականացրել է երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում և իր կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	137.	Կրթական պաշարների և ուսումնական գրականության բարելավում	<p>Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության նոր չափանիշների և գործիքակազմի ներդրում.</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարության 2018 թվականի հունվարի 29-ի թիվ 01/07.2/874-18 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմին է տրամադրվել ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիրների ցանկի 137-րդ կետի իրականացումն ապահովող «Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման չափանիշներին և գործիքակազմին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որին ի պատասխան հանձնարարվել է ՀՀ կառավարության աշխատակազմի եզրակացության հիման վրա լրամշակել նախագիծը և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:</p> <p>Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի եզրակացությամբ բարձրացված հարցերի լուծումն ամբողջությամբ ապահովելու համար ՀՀ վարչապետի՝ 2018 թվականի մարտի 27-ի թիվ 02/14.1/4724-18 հանձնարարությամբ «Նոր սերնդի դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման չափանիշներին և գործիքակազմին» հավանություն տալու մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվելու վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի հուլիսի 30-ը:</p> <p>Նախագիծը տրամադրվել էր Կառավարության աշխատակազմին, որը այն վերադարձրել էր ևս մեկ անգամ քննարկման: Այժմ նախարարությունում իրականացվում են քննարկումներ հրատարակիչների, շահագրգիռ այլ անձանց հետ, հստակեցվում են մոտեցումները, սկզբունքները, մեխանիզմները:</p>	
ՀՀ կրթության և գիտության նախարար	138.	Ուսուցիչների պատրաստման, զարգացման և մասնագիտական առաջընթացի արդյունավետ համակարգի ներդրում	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի և Եվրոպական միության «Yes» ծրագրի փորձագետի կողմից մշակվել է «Արտահերթ (կամավոր) ատեստավորման միջոցով ուսուցիչների խրախուսման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիրը», որն իր մեջ ներառում է ուսուցիչների վերապատրաստման, ատեստավորման և	

<p>ւթյուն</p>			<p>մասնագիտական առաջխաղացման մեխանիզմները: Ծրագիրը քննարկվել է ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմերում և արժանացել է հավանության: Նշված ծրագրի հիման վրա մշակվել է «Արտահերթ (կամավոր) ատեստավորման միջոցով ուսուցիչների խրախուսման համակարգի ներդրման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը ՀՀ կրթության և գիտության նախարարությունում մեկ անգամ ևս քննարկվելուց հետո կներկայացվի հանրային քննարկման, կհաստատվի, որից հետո կսկսվի համակարգի ներդրման գործընթացը:</p>	
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>139.</p>	<p>Դպրոցների կառավարման համակարգի վերափոխում</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի և Եվրոպական միության «Yes» ծրագրի շրջանակում աշխատանքներ իրականացնող փորձագետներից մեկի համագործակցության արդյունքում մշակվել է «Դպրոցների կառավարման համակարգի վերափոխում» միջոցառման իրականացումն ապահովող գործողությունների փաթեթ: Մշակված փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ, որտեղ բազմիցս քննարկվել է բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Նախագիծը քննարկվել է նաև Կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի նիստում, արժանացել է հավանության: Արված դիտողություններն ու առաջարկները կամփոփվեն և ըստ նպատակահարմարության կներառվեն:</p> <p>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառավարությունն այլևս իրավասություններ չունի արձանագրային որոշումներ ընդունելու, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջները, միևնույն ժամանակ, հաշվի առնելով քաղաքական իրողությունների փոփոխությունները և դրա արդյունքում ձևավորված մի քանի կառավարությունների դիրքորոշումների հստակեցման անհրաժեշտությունը նշված իրավական ակտով սահմանվող կարգավորումների վերաբերյալ, Կրթության և գիտության նախարարությունում շարունակվում են նախագծի մշակման, սկզբունքների և իրականացման հստակեցման վերաբերյալ, այդ թվում՝ հանրային քննարկումները:</p> <p>Միաժամանակ, նախարարությունը նախաձեռնել է համապատասխան իրավական հիմքերի ամրագրումը կրթության ոլորտը կարգավորող օրենքներում, մասնավորապես, «Հանրակրթության մասին» և</p>	

			<p>«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքերում՝ Կրթության և գիտության նախարարության համար սահմանելով անմիջական լիազորություն՝ հաստատելու համապատասխան կարգեր և ընթացակարգեր:</p>	
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>140.</p>	<p>Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնում</p>	<p>ՀՀ Շիրակի մարզում 2018 թվականի սեպտեմբերի 1-ից «Կայուն դպրոցական սնունդ» «Ազգային ծրագրի» ներդրման նպատակով իրականացվել են լայնածավալ նախապատրաստական աշխատանքներ: Մասնավորապես մարզի՝ ծրագրում ընդգրկված 145 դպրոցների կարիքների գնահատման աշխատանքների ընթացքում պարզվել է, որ 7 դպրոցների ենթակառուցվածքները գտնվում են բավարար վիճակում, իսկ թվով 138 դպրոցում մեկնարկել են խոհանոցների բարելավման աշխատանքները: Վերանորոգման աշխատանքների համար անհրաժեշտ շինարարական նյութերը դպրոցներին տրամադրվել են ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից: Այն դպրոցներին, որտեղ ավարտվել են վերանորոգման աշխատանքները, տրամադրվել են գազի և էլեկտրական վառարաններ, սառնարաններ, հաց թխելու սարքավորումներ, տեղադրվել են տաք ջրի և այլ սարքավորումներ: Տասը դպրոցում խոհանոցների վերանորոգման աշխատանքներն իրականացրել են «Հայաստանի Մանուկներ», «Դեպի Հայք» հիմնադրամների, համայնքի ղեկավարների և բարեգործների կողմից:</p> <p>Վեց դպրոցներից չորսը խոհանոցային պայմաններ չունենալու պատճառով տրամադրում են չոր սնունդ, իսկ երկուսը ծրագիրն իրականացնում են առկա հին խոհանոցային գույքով: Այնուամենայնիվ, ըստ նախատեսված ժամանակացույցի, ծրագիրը ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից փոխանցվել է ՀՀ կառավարությանը: Շիրակի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունները ծրագրին նախապատրաստելու նպատակով իրականացվել է նաև տնօրենների և խոհարարների վերապատրաստում: Իրականացված նախապատրաստական աշխատանքների արդյունքում 2018 թվականի սեպտեմբերին Շիրակի մարզի 148 դպրոցներից 145-ը անցում կատարեցին «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրին՝ սնունդ տրամադրելով նախակրթարանների և 1-4-րդ դասարանների թվով 12994 սովորողի:</p> <p>Ընդհանուր առմամբ 2018 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ</p>	

			<p>«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում սնունդ է ստանում ՀՀ Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի, Շիրակի (Ազգային ծրագիր) հանրակրթական ուսումնական հաստատությունների նախակրթարանների և 1-4-րդ դասարանների ավելի քան 40.000, իսկ ՀՀ մյուս 5 մարզերում ՄԱԿ-ի ՊՀԾ-ի կողմից իրականացվող ծրագրում՝ 60.000 սովորող:</p>	
<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p>	<p>141.</p>	<p>Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոդելի մշակում և ներդրում</p>	<p>Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ (GIZ) համագործակցության շրջանակներում ՀՀ ԿԳ նախարարի 2017թ. սեպտեմբերի 5-ի թիվ 1026-Ա/2 հրամանի համաձայն՝ ՄԿՈՒ 4 ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով ներդրվել է երկակի ուսուցման (դուալ) կրթական համակարգ (հիմնական կրթության հիմքով) հետևյալ մասնագիտություններով՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»-Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջում, «Գինեգործություն և հյուսիսի արտադրություն»-Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջում, «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ»-Երևանի պետական հումանիտար քոլեջում, «Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում» և «Զբոսաշրջություն» -Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջում:</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 1-ի թիվ 1247-Ա/2 և 2018թ. փետրվարի 9-ի թիվ 108-Ա/2 հրամանների համաձայն ձևավորված աշխատանքային խմբերի կողմից մշակվել են ուսուցման դուալ համակարգի ներդրման, իրականացման նախագծեր, ինչպես նաև համապատասխան ուսումնամեթոդական փաստաթղթերի փաթեթներ՝ մոդուլային ծրագրեր, համապատասխան ուսումնական պլաններ, պրակտիկաների կազմակերպման նոր մեխանիզմների վերաբերյալ առաջարկություններ, որոնք փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով ներկայացվել են ՀՀ ԿԳՆ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ:</p> <p>Փորձարարական երկակի (դուալ) ուսուցման ուսումնական պլանները, ծրագրերը քննարկվել են ՄԿՈՒ զարգացման ազգային կենտրոնի և համապատասխան ոլորտի գործատուների հետ, լրամշակվել են աշխատանքային խմբերի կողմից: Լրամշակված փաթեթները «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից երաշխավորվել են փորձարարական նպատակով ուսուցման կազմակերպման կիրառության</p>	

համար:

Երկակի ուսուցման (դուալ) կրթական համակարգի ընդլայնման նպատակով մշակվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների նախագծեր, համաձայն որի երկակի ուսուցման (դուալ) կրթական համակարգը փորձնականորեն ներդրվել է նաև ներքոնշյալ ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում.

Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ- Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում,

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ- Զբոսաշրջություն,

Երևանի թիվ 6 արհեստագործական պետական ուսումնարան - Խոհարարական գործ, Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում,

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ- Մեխատրոնիկա,

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ- Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ, Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ- Զբոսաշրջություն,

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան- Խոհարարական գործ,

Սիսիանի պետական քոլեջ- Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում):

Մասնագիտություններն ընտրվել են՝ հիմք ընդունելով տնտեսության զարգացման գերակա ոլորտները:

Բացի վերոգրյալից՝ ընտրված ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում իրականացվում են նաև երկակի ուսուցման (դուալ) կարճաժամկետ ծրագրեր.

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ - Ռոբոտաշինություն, Արևային էներգիայի համակարգերի սպասարկում,

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ-Արևային էներգիայի համակարգերի սպասարկում,

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան- Արևային էներգիայի համակարգերի սպասարկում մասնագիտությունների գծով:

Այսպիսով, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական թվով 15 ուսումնական հաստատություններում 11 մասնագիտությունների

			գծով ներդրվել է երկակի ուսուցման համակարգ (մասնագիտությունների թիվը պայմանավորված է մասնագիտությունների կրկնությամբ):	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	142.	Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակին համապատասխան առնվազն 7 որակավորումների ոլորտային շրջանակների մշակում	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համատեղ դասակարգել է բարձրագույն կրթության մասնագիտությունները ըստ բնագավառների, ոլորտների և ենթաոլորտների: Ինչպես նաև քննարկվել են մասնագիտության (ոլորտով, ենթաոլորտով) հավատարմագրման պակաս ծախսատարությունը, կազմակերպման և իրականացման ընթացակարգը, առաջարկվող ճանապարհային քարտեզի փուլերն իրենց հիմնական նպատակներով և վերջնարդյունքներով: Դասակարգված բարձրագույն կրթության մասնագիտությունների ոլորտները և ենթաոլորտները հիմք են հանդիսանալու ծրագրային հավատարմագրման համար: Բուհերի կողմից ներկայացվել են թեկնածուներ որակավորումների ոլորտային շրջանակների բնութագրերի մշակման աշխատանքային խմբերում ընդգրկվելու համար: Ոլորտների և ենթաոլորտների որակավորումների բնութագրիչները մշակվելու են ուսումնառության վերջնարդյունքների հիմքով, որին հաջորդելու է բուհի կրթական ծրագրերի համապատասխանեցումը Որակավորումների ոլորտային շրջանակին՝ համապատասխան փոփոխություններ կատարելով վերջնարդյունքներում և առարկաների բովանդակության, դասավանդման և գնահատման մեջ:</p>	
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	143.	Բնագիտական և ինժեներական ոլորտում բուհ-գիտահետազոտական ինստիտուտ-գործատու գիտակրթական կլաստերների մոդելների տարբերակների մշակում	<p>Բնագիտական և ինժեներական ոլորտում բուհ-գիտահետազոտական ինստիտուտ-գործատու գիտակրթական կլաստերների մոդելների տարբերակների մշակման ուղղությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարությունում 2018թ. ապրիլ ամսին բուհերի և գիտակրթական կազմակերպությունների մասնակցությամբ տեղի ունենած աշխատանքային հանդիպման արդյունքում՝ Գիտության պետական կոմիտեին և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին առաջարկվել է էներգետիկայի ճյուղում՝ ՀՀ ԳԱԱ էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտի և ՀԵՑ-ի մասնակցությամբ, իսկ բնագիտական ճյուղում՝ Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի Ֆիզիկայի ինստիտուտ) և ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի մասնակցությամբ գիտակրթական կլաստերի ձևավորման հնարավոր</p>	

		<p>մոդելների ստեղծման վերաբերյալ ներկայացնել առաջարկներ:</p> <p>Ներկայացված առաջարկների հիման վրա կշարունակվեն աշխատանքները, մասնավորապես՝ բուհերի, գիտական ու գիտահետազոտական հիմնարկների և գործարար ոլորտի կազմակերպությունների ու այլ շահառուների համագործակցության շրջանակը, դրանց գործունեության հիմնական ուղենիշները և դրանց միջև իրավահարաբերությունները, կլաստերի ներսում և դրանից դուրս ռազմավարական կարևորություն ունեցող հիմնախնդիրների քննարկման համար նախատեսվող կառավարման/խորհրդակցական մարմնի գործառույթները, ինչպես նաև ֆինանսավորման սկզբունքները և աղբյուրները հստակեցնելու ուղղությամբ՝ սրա միջոցով ակնկալելով խթանել որակյալ և պահանջված մասնագետների պատրաստումը, գիտություն-արտադրություն կապերի զարգացումը, տնտեսության մեջ գիտելիքահեն արտադրության հիմնումը և գիտական արտադրանքի առևտրայնացումը:</p>	
--	--	--	--